



Տեղի ունեցած ապահովագրական պատահարի արդյունքում վնասվել է ապահովագրված մեքենայի 85.58%-ը, ինչը ըստ պայմանների համարվում է մեքենայի ամբողջական կորուստ: Սակայն Ընկերության կողմից տրամադրված փոխհատուցման չափը ավելի քիչ է կազմել: Հաճախորդը, համաձայն չլինելով ապահովագրական հատուցման չափի հետ, դիմել է Հաշտարարին՝ Ընկերությունից պահանջելով տրամադրել գույքային վնասի ամբողջական փոխհատուցում:

Հաշտարարը ուսումնասիրել է խնդրի վերաբերյալ Ընկերության դիրքորոշումը, ինչից պարզ է դարձել, որ ըստ կողմերի միջև ստորագրված ապահովագրական վկայագրի՝ մեքենան ապահովագրված է ոչ լրիվ արժեքով: Բացի այդ, պայմանագրով Բանկն է համարվում շահառու, ով համաձայնել է հատուցման չափի հետ:

Հաշտարարը, ուսումնասիրելով գործին առնչվող փաստաթղթերը և օրենսդրական ակտերը, եկել է այն եզրահանգման, որ ըստ պայմանագրի՝ եթե տեղի է ունեցել ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի ամբողջական կորուստ, այսինքն՝ վերականգնողական արժեքը կազմում է ավտոտրանսպորտային միջոցի իրական արժեքի 80% և ավելի (մեր պատմության մեջ՝ 85,58%), ապա ապահովագրողը հատուցում է ապահովագրական պատահարի դրությամբ ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի իրական արժեքի չափով: Այս դեպքում ապահովագրական պատահարի հետևանքով վնասված ավտոտրանսպորտային միջոցի սեփականության իրավունքն անցնում է ապահովագրողին: Իսկ եթե ապահովագրությունն իրականացվել է ոչ լրիվ արժեքի չափով, ապա եթե ապահովագրության օբյեկտի իրական (շուկայական) արժեքը ավելի մեծ է, քան տվյալ ապահովագրության օբյեկտի հայտարարագրված ապահովագրական գումարը, ապահովադիրը վնասված կամ կորած ապահովագրության օբյեկտի համար հատուցումը կստանա այն նույն համամասնությամբ, ինչպիսին ապահովագրական գումարի հարաբերությունն է տվյալ ապահովագրության օբյեկտի իրական (շուկայական) արժեքի նկատմամբ:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ Հաշտարարը կայացրել է մասնակի բավարարման որոշում՝ հաշվարկելով փոխհատուցման ենթակա գումարը ըստ ապահովագրության պայմանագրի պայմանների: